



SHE'S NEXT, EMPOWERED BY VISA ՄՐՑՈՒՅԹ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆ ՁԵՌՆԵՐԵՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ¹

ՀԱՅԱՍՏԱՆ, 2026 ԹԹ.

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ. Visa-ի She's Next, Empowered by Visa դրամաշնորհային մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) կազմակերպիչը ՆՈԲԼԵԹ ՄԵԴԻԱ ԼԻՄԻԹԵԴ (NOBLET MEDIA LIMITED) ընկերությունն է, որը գրանցված է Կիպրոսի օրենսդրության հիման վրա, գրանցման համար՝ HE 173925, և որի գրանցման հասցեն է՝ Մպումպուլինաս 1-3, ԲՈՒԲՈՒԼԻՆԱ ՇԵՆՔ, քնակարան 42, 1060, Նիկոսիա, Կիպրոս (Mpoumpoulinas 1-3, BOUBOULINA BUILDING, Flat 42, 1060, Nicosia, Cyprus) (այսուհետ՝ Կազմակերպիչ),

Մրցույթի գործընկերն է՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ), (այսուհետ՝ Գործընկեր կամ ՎԶԵԲ),

Մրցույթի գործառնական գործընկերն է՝ Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ), (այսուհետ՝ Գործառնական գործընկեր կամ ՀԲԸՄ),

Մրցույթն անցկացվում է Հայաստանում իրականացված She's Next, Empowered by Visa երրորդ ակիքի շրջանակներում: Դիմորդները մրցույթին կարող են մասնակցել հունվարի 12-ից՝ ժամը 10:00-ից սկսած, իսկ հայտերն աստիճանական կարգով կընդունվեն մինչև 2026 թ. հունվարի 31-ը՝ ժամը 20:00-ն (այսուհետ՝ Հայտերի ներկայացման ժամանակահատված):

Մրցույթի բոլոր փուլերը, ներառյալ՝ հայտի ձևաթղթի լրացումը, վերապատրաստման դասընթացները և գաղափարների ներկայացման միջոցառումը, անցկացվելու են հայերեն: Մրցութային բոլոր գործողություններին մասնակցելու համար դիմորդները պետք է ազատ տիրապետեն հայերենին:

¹ ՍՈՒԹՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՈՐԵՎԷ ԳՆՈՒՄ ԿԱՍ ՎՃԱՐՈՒՄ ԱՆՀՐԱՃԵՑՑ ՉԷ: ԳՆՈՒՄԸ ԿԱՍ ՎՃԱՐՈՒՄԸ ՉԵՆ ԱՎԵԼԱՅՆԵԼՈՒ ՁԵՐ ՀԱՂԹԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ: ՄՐՑՈՒՅԹԸ ԲԱՅ Է ՄԻԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

ՀԱՅՏԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ կախված է նրանից, թե դիմողը որքանով է համապատասխանում գնահատման չափանիշներին: Պայմաններն ու վարքագծի կանոնները կարգավորվում են Visa-ի և ծրագրային գործընկերների կողմից, ինչպես նաև Հայաստանի համապատասխան օրենքների հիման վրա, և ղեկավարվում են սույն պաշտոնական կանոններով:

1. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՃԱՆԱՉՈՒՄԸ. ՕՐԵՆՔՆԵՐԸ. Սույն մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնելով՝ դիմորդներից յուրաքանչյուրն անվերապահ ճանաչում է սույն պաշտոնական կանոնները, ինչպես նաև համաձայնում է կատարել դրանց պահանջները և կազմակերպչի որոշումները, որոնք վերջնական են և պարտադիր՝ մրցույթի հետ կապված բոլոր հարցերով: Սույն մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնելով դիմորդներից յուրաքանչյուրը նաև համաձայնում է կատարել մրցույթին դիմորդի մասնակցությանն առնչվող համապատասխան օրենքների պահանջները: Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնելը չի կարող համարվել որևէ այլ գովազդի, վիճակահանության կամ մրցույթի հայտ:

2. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԿԱՏԵԳՈՐԻԱՆԵՐ

- a. Մրցույթը բաց է ցանկացած ֆիզիկական անձի համար, որը համապատասխանում է ընդունելիության հետևյալ չափանիշներին.
 - i. Դիմորդը հանդիսանում է իգական սեռի ՀՀ քաղաքացի,
 - ii. Դիմորդը առնվազն 18 տարեկան է և Հայաստանի օրենքի հիման վրա հանդիսանում է չափահաս՝ բացառությամբ Visa-ի կամ Գործընկերոջ/Գործատնական գործընկերոջ, պետական հաստատությունների, դրանց առընթեր ընկերությունների կամ գործակալների աշխատողների և նրանց ընտանիքի անդամների, ինչպես նաև Մրցույթի ժյուրիի անդամների,
 - iii. Դիմորդը պետք է հանդիսանա բիզնեսի առնվազն 51%-ի սեփականատերը, և իր գործունեությունը ծավալի Հայաստանում,
 - iv. Դիմորդի բիզնեսը պետք է ունենա առնվազն 1 տարուց ավելի պատմություն,

- v. Դիմորդը պետք է ունենա այնպիսի բիզնես, որը շուկայում առաջարկում է արտադրանք կամ ծառայություն, գոյացնում է եկամուտ և կարող է ներկայացնել համապատասխան փաստաթղթեր բիզնեսի գրանցման վերաբերյալ, և որը 2(d) պարբերության իմաստով անընդունելի չի համարվում:
- b. Գործառնական գործընկերն իրեն իրավունք է վերապահում սեփական միանձնյա հայեցողությամբ և ցանկացած պահի որակագրկելու ցանկացած դիմորդի կամ բիզնեսի, եթե կազմակերպիչը կամ Visa-ն պարզում են, որ մրցույթին նման դիմորդի կամ բիզնեսի մասնակցությունը (կամ մասնակցության շարունակությունը) թույլատրելի վնաս կպատճառի գործընկերոջ, Visa-ի կամ գործառնական գործընկերոջ համբավին՝ ընդհանուր հանրության աչքում: Տվյալ դեպքի առնչությամբ գործառնական գործընկերոջ բոլոր որոշումները վերջնական են, պարտադիր և բողոքարկման ենթակա չեն:
- c. Visa-ի, գործընկերոջ, գործառնական գործընկերոջ և մրցույթի մեջ ներգրավված այլ ընկերությունների աշխատողները, ծառայողները, տնօրենները և գործակալները, ինչպես նաև նրանց անմիջական ընտանիքի և տնային տնտեսության անդամները չեն կարող մասնակցել մրցույթին: Visa-ն, գործընկերը, գործառնական գործընկերը և նրանց համապատասխան գովազդային և առաջխաղացման գործակալությունները և մրցանակ տրամադրողները, մրցույթի մշակման կամ իրականացման մեջ ներգրավված ցանկացած այլ ընկերություն կամ կազմակերպություն, ինչպես նաև դրանց համապատասխան ծառայողները, տնօրենները, աշխատողներն ու գործակալները (բոլորը միասին՝ մրցույթի մասնակիցներ), ինչպես նաև այդ անձանց անմիջական ընտանիքի և տնային տնտեսության անդամները չեն կարող մրցույթին մասնակցելու հայտ ներկայացնել: Սույն մրցույթի և սույն պաշտոնական կանոնների իմաստով. (i) «Անմիջական ընտանիքի անդամ» է համարվում անձի կինը/ամուսինը և անձի և նրա

կնոջ/ամուսնու ծնողները, ոչ կենսաբանական ծնողները, օրինական խնամակալները, երեխաները, ոչ կենսաբանական երեխաները, քույր-եղբայրները, ոչ կենսաբանական քույր-եղբայրները և նրանց համապատասխան կանայք/ամուսինները, (ii) «Տնային տնտեսության անդամներ» են համարվում բնակության նույն վայրում համատեղ ապրող անձինք, անկախ նրանից՝ միմյանց հետ կապ ունեն, թե ոչ:

d. **ՈՎՔԵՐ ՉԵՆ ԿԱՐՈՂ ԴԻՄԵԼ.**

Ընկերությունները, որոնք արտադրում են որևէ տեսակի զենք, խմիչք (այդ թվում՝ ալկոհոլային), սնունդ և բժշկական նյութեր (այդ թվում՝ որևէ տեսակի վիտամիններ), անձնական խնամքի (հեղուկներ) և առողջության պարագաներ (որոնք կարող են հանգեցնել առողջական խնդիրների), վտանգավոր ապրանքներ (թմրանյութեր, զենքեր, պայթուցիկներ), զբաղվում են խարդախություն ենթադրող գործունեությամբ, բարձր ռիսկային ֆինանսական ծառայություններով (ֆինանսական բուրգեր, խաղատներ, խաղադրույքներ), չգրանցված կրոնական կազմակերպությունները, դեղագործական և բժշկական սարքավորում արտադրող ընկերությունները, ավանդական/ժողովրդական բժշկությամբ զբաղվողները, էզոթերիկ ծառայությունները (թարո, նումերոլոգիա, մոգություն):

3. ԻՆՉՊԵՍ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ ՀԱՅՏԸ. Մրցույթի մասնակից դառնալու համար դիմորդներից յուրաքանչյուրը պետք է լրացնի և ներկայացնի «Մրցույթի մասնակցության հայտի ձևաթուղթը», որը հասանելի է մրցույթի [կայքէջում](#), այդ թվում լրացնելով մրցույթի մասնակցության հայտի ձևաթղթի բոլոր բաղադրիչները (այսուհետ՝ Մասնակցության հայտ): Մրցույթի մասնակցության հայտի ձևաթուղթը հասանելի է միայն հայերեն. այն առկա է մրցույթի կայքէջում:

4. ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՁՆԵՐ. ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

a. Բոլոր հայտերը պետք է ստացվեն նախքան հայտերի ներկայացման ժամանակահատվածի ավարտը: Հայտերի

ներկայացման հաստատում կամ պատասխան նամակ չի նախատեսվում: Հայտի փոխանցման հաստատումը հայտի ստացման հաստատում չի նշանակում: Թերի, անընթեռնելի, ուշ ներկայացված կամ անորոշ հայտերը համարվում են անվավեր և որակազրկվում են:

- b. Անձի հաշվարկով մեկ (1) հայտի սահմանափակում. դիմող անձը պետք է մասնակցի ուսուցողական ծրագրին: Նույն անձը չի կարող դիմումներ ներկայացնել մեկից ավելի բիզնես-ծրագրի համար: Բացի այդ, միևնույն բիզնես-ծրագրի անդամները չեն կարող միևնույն ծրագրի համար մի քանի հայտ ներկայացնել: Դիմողը պետք է լինի նույն այն անձը, որը մասնակցում է Մրցույթի բոլոր փուլերին:
- c. Դիմորդի ինքնության կամ ընդունելիության շուրջ վեճի դեպքում հայտը կվերագրվի նշված էլեկտրոնային փոստի հասցեի իրավասու օգտատիրոջը: Հայտի ներկայացման համար էլեկտրոնային փոստի կամ սոցիալական ցանցերի մի քանի օգտահաշիվներ կիրառելը կարող է հանգեցնել հայտերի որակազրկման:
- d. Յուրաքանչյուր հայտ (այդ թվում՝ մրցույթի մասնակցության հայտի ձևանմուշն ու հայտում տեղ գտած մյուս բոլոր տվյալները, տեղեկատվությունը, նկարները, բովանդակությունն ու նյութերը) պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.
 - i. Այն պետք է ամբողջությամբ հանդիսանա դիմորդի իրական աշխատանքի արդյունքը.
 - ii. Այն չպետք է պարունակի անձի որևէ լուսանկար, արտաքին տեսքի պատկեր, անուն, ձայն կամ անձի անհատականության և ինքնության այլ տարրեր, եթե դիմորդը չի ստացել տվյալ անձի (պատկերված փոքրահասակ անձի դեպքում՝ վերջինիս ծնողի/օրինական ներկայացուցչի) բոլոր թույլտվություններն ու համաձայնությունները, որոնք հարկավոր են մրցույթի հայտը ներկայացնելու և սույն պաշտոնական կանոններով նախատեսված՝ հայտում տեղ գտած իրավունքներով օժտվելու համար:
 - iii. Այն չպետք է ոտնահարի, յուրացնի կամ խախտի որևէ երրորդ կողմի՝ մտավոր սեփականության հետ կապված որևէ իրավունք, գաղտնիության

իրավունքները, հրապարակման իրավունքները կամ այլ գույքային իրավունքները:

- iv. Հայտում ներկայացված ողջ տեղեկատվությունը պետք է լինի ամեն առումով ճշմարիտ, ճշգրիտ և պատշաճ:
- v. Այն չպետք է ստեղծված կամ ներկայացված լինի որևէ համակարգչային լեզվի, մակրո կամ այլ ավտոմատացված մեթոդի միջոցով:
- vi. Այն պետք է համապատասխանի սույն Պաշտոնական կանոններին և կիրառելի բոլոր օրենքներին:
- vii. Այն պետք է պատշաճ լինի ընդհանուր լսարանի համար հրապարակման առումով, և չպետք է պարունակի որևէ բան, որը.
 1. անօրինական է, վիրավորական, խարդախ, զրպարտող, պոռնոգրաֆիկ, սեռական բնույթի, անպարկեշտ, ամոթալի, մեկ այլ անձի անձնական գաղտնիությունը խախտող, ասելություն պարունակող կամ այլ կերպ անընդունելի.
 2. խթանում է խտրականությունը՝ ռասայի, էթնիկ ծագման, ազգության, կրոնի, սեռի, սեռական կողմնորոշման, հաշմանդամության կամ տարիքի հիմքով.
 3. քաջալերում է բռնությունը կամ անօրինական կամ ոչ անվտանգ գործունեությունը.
 4. պարունակում է սպառնալիք, հալածանք կամ նվաստացում.
 5. ծառայում է որևէ անձի կամ կազմակերպության ինքնությունը կամ որևէ անձի կամ կազմակերպության հետ կապը կեղծելու համար.
 6. կամ խաթարում կամ վնասում է Visa-ի, գործընկերոջ, գործառնական գործընկերոջ, մրցանակ տրամադրողների կամ վերջիններիս համապատասխան ծառայողների, տնօրենների, աշխատողների, արտադրանքի կամ ծառայությունների համբավը կամ բարի կամքը:

- viii. Այս պահանջներին չպատասխանող հայտերը (գործառնական գործընկերոջ միանձնյա հայեցողությամբ) համարվում են անվավեր և ենթակա են որակազրկման: Դիմորդներից կարող է պահանջվել՝ ներկայացնել այս պահանջներին համապատասխանությունը հավաստող ապացույցներ, իսկ նման ապացույցներն ըստ պահանջի չներկայացնելը, գործառնական գործընկերոջ միանձնյա հայեցողությամբ, որակազրկում է դիմորդի հայտը:
- ix. Թե՛ հայտի ներկայացումը, և թե՛ մրցույթին որևէ այլ կերպ մասնակցությունը չեն կարող համարվել գաղտնի, հավատարմագրային, գործակալական, աշխատանքային կամ այլ հարաբերություն կամ պայմանագիր Visa-ի, գործառնական գործընկերոջ և որևէ դիմորդի միջև, և հայտի ներկայացմամբ դիմորդն ընդունում է, որ նման հարաբերություն կամ պայմանագիր առկա չէ:
- x. Մրցույթի մասնակցության հայտ ներկայացնելով՝ դիմորդներից յուրաքանչյուրը հայտարարում և գործառնական գործընկերոջը երաշխավորում է, որ.
 1. Դիմորդը համապատասխանում է մրցույթին մասնակցության ընդունելիության բոլոր պահանջներին և
 2. Դիմորդը պահպանել է սույն պաշտոնական կանոնները և մրցույթի մասնակցության հայտի ներկայացմանը և մասնակցությանն առնչվող բոլոր վերաբերելի օրենքները:

5. ՄՐՑՈՒՅԹԻ ՓՈՒԼԵՐԸ. ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ, ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԵՎ ՀԱՂԹՈՂԻ ՈՐՈՇՈՒՄ

- a. Հայտերի գնահատման ժամանակահատվածը. Հաղթողները որոշվելու են հայտերի ներկայացման պատուհանին հաջորդող ժամանակահատվածում:

- b. Ժյուրիի անդամները. ընդունելի համարված Հայտերը գնահատվելու են Visa-ի և գործընկերոջ ձևավորած ժյուրիի կողմից (որը նկարագրված է ստորև).
- c. Հայտերի գնահատման մեթոդները և Հայտերի ներկայացման չափանիշները (ընդհանուր առմամբ 100 միավոր). Ժյուրիի անդամները իրենց որոշումը կկայացնեն հետևյալ չափանիշների հիման վրա.
 - I. Խնդիրը, որը լուծվում է բիզնեսի միջոցով (30 միավոր),
 - II. Ձեռնարկատիրական գործունեության համոզիչ պատմություն. դիմորդը պետք է հստակ պատկերացում ունենա սեփական ծրագրի/բիզնես-գաղափարի մասին, որը ժյուրիի անդամների կողմից գնահատվում է բիզնեսի հեռանկարայնության տեսանկյունից (20 միավոր),
 - III. Բիզնեսի չափիչների հիմնավորությունը. Դիմորդը պետք է հստակ սահմանի բյուջեն, այն է՝ ծախսերի կառուցվածքը և եկամուտների հոսքերը առնվազն մեկ տարվա (և ավելի) կտրվածքով: Ինչպես են իրենք ծախսելու ծրագրի շրջանակներում շնորհված գումարը (հաստատուն և փոփոխական ծախսերը), (20 միավոր).
 - IV. Համոզիչ թվային ներկայացվածություն. Բիզնեսները պետք է պարունակեն թվայնացման բաղադրիչ (20 միավոր).
 - V. Սոցիալական պատասխանատվության բաղադրիչ, ոչ պարտադիր (10 միավոր):
- d. Ժյուրին ստացված դիմումներից ընտրում է լավագույն 10 հայտերը և համապատասխան դիմողների հետ իրականացնում է դեմառդեմ հարցազրույցներ՝ նրանց հետ կապ հաստատելով հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեների կամ բջջային հեռախոսահամարի միջոցով: Սոցիալական ցանցի որևէ օգտահաշիվ չի կարող համարվել պաշտոնական հաղորդակցության եղանակ:

- e. Լավագույն 10 Հայտերը աջակցություն կստանան երկու լիարժեք օր տևող առերես (ոչ առցանց) վերապատրաստման դասընթացների ձևով, որոնք նվիրված կլինեն գաղափարների ներկայացման հնարքներին, մարքեթինգին և ֆինանսներին, և որոնց մասնակցելը պարտադիր է:
- f. Լավագույն 10 հայտերից ժյուրին կընտրի 3 հաղթողներին, որոնք գաղափարների ներկայացման առերես (ոչ առցանց) անցկացվող օրվա ընթացքում կարժանանան դրամական պարգևների:
- g. Գաղափարների ներկայացման օրը Կատեգորիաներից յուրաքանչյուրում ժյուրին կընտրի հաղթողին՝ հետևյալ չափանիշների հիման վրա.
 - **Փորձը.** Ներկայացնողը կգնահատվի դասընթացներից ստացած գիտելիքի և իր ընդհանուր փորձառության հիման վրա (5 միավոր).
 - **Տեսլականը.** Ներկայացնողը պետք է հատկացված ժամանակամիջոցում՝ 2-3 րոպեում արդյունավետ ներկայացնի տեղեկատվությունն իր բիզնեսի մասին (5 միավոր).
 - **Հստակ և պարզորոշ նկարագրություն.** Ներկայացնողը պետք է հանդես գա կուռ կառուցվածք ունեցող և հստակ ելույթով՝ նկարագրելով բիզնեսը և դրա աճի հետագիծը (5 միավոր):
- h. Հայտի և գաղափարի ներկայացման գնահատման սանդղակը.
 - I. **0 միավոր** (շատ թույլ). Առաջարկը չի համապատասխանում չափանիշներին կամ չի կարող գնահատվել՝ բացակայող կամ թերի տեղեկատվության պատճառով.
 - II. **1 միավոր** (թույլ). Չափանիշներին համապատասխանությունը պատշաճ չէ կամ առկա են լուրջ թույլ կողմեր.

- III. **2 միավոր** (բավարար). Առաջարկն ընդհանուր առմամբ համապատասխանում է չափանիշներին, սակայն առկա են էական թույլ կողմեր.
- IV. **3 միավոր** (լավ). Առաջարկը լավ է համապատասխանում չափանիշներին, սակայն առկա են մի շարք թերություններ.
- V. **4 միավոր** (ջատ լավ). Առաջարկը լավ է համապատասխանում չափանիշներին, սակայն առկա են փոքրաթիվ թերություններ.
- VI. **5 միավոր** (գերազանց). Առաջարկը հաջողությամբ համապատասխանում է չափանիշների բոլոր վերաբերելի կողմերին:
 - i. Ժյուրիի անդամների կողմից հայտերի ընտրության և գաղափարների ներկայացման գործընթացում լրացված գնահատման ձևաթղթերը գաղտնի են և չեն տրամադրվում երրորդ կողմերին, այդ թվում՝ մասնակիցներին:
 - j. Ընտրված երեք հաղթողների մասին տեղեկատվությունը կիրառարակվի ծրագրի գործընկերների հաղորդակցական ուղիներով: Բացի այդ, հաղթողներից յուրաքանչյուրը ներկայացված հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեով կստանա ծանուցում:
 - k. Ակնկալվում է, որ լավագույն մասնակիցների և հաղթողների մասին տեղեկատվությունը կիրառարակվի Visa-ի հարթակներում, լրատվամիջոցներում և գործառնական գործընկերոջ հաղորդակցության ուղիներով:

Մրցույթի փուլերի վերաբերյալ տեղեկատվության բոլոր թարմացումներն ու ծանուցումները դիմորդներին ուղարկվում են իրենց հայտերում նշված էլեկտրոնային փոստի հասցեներով: Մասնակիցները պատասխանատու են էլեկտրոնային փոստի այդ հասցեի և կոնտակտային տվյալների ճշգրտության համար:

Մրցութային որևէ միջոցառման (ներառյալ, սակայն ոչ միայն վերապատրաստման դասընթացներին, գաղափարների ներկայացմանը և մրցանակաբաշխության միջոցառումներին) մասնակցելով պայմանավորված ուղևորության, կեցության և

անձնական կարգավորումների հետ կապված բոլոր ծախսերը ամբողջությամբ հոգում է մասնակիցը: Կազմակերպիչը, գործընկերը և գործառնական գործընկերը նման որևէ ծախսի փոխհատուցում կամ վճարում չեն կատարում:

6. ԺՅՈՒՐԻՆ. Ընտրական հանձնաժողովը ներառում է խնդրո առարկայի փորձագետներ և բրենդինգի, թվային տեխնոլոգիաների, բանկային պրոդուկտների, վաճառքի, մարքեթինգի, հաղորդակցության և ներդրումների գծով մասնագետներ: Հաղթողները որոշվում են գաղտնի քվեարկության արդյունքում: Ժյուրիի կազմը խստիվ գաղտնի է նախքան մրցույթի անցկացման օրը, և նրանք որոշվում են 5-րդ պարբերությանը համապատասխան: Visa-ն և մրցույթի գործընկերը իրավասու են փոխելու ժյուրիի անդամների թիվը: Մասնակիցներից յուրաքանչյուրի մասով ժյուրիի որոշումը կայացվում է պարզ մեծամասնության սկզբունքով: Ժյուրիի որոշումը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ: Ժյուրին իր գործունեությունն իրականացնում է սեփական լիակատար հայեցողությամբ և պարտավոր չէ որոշում կայացնել որևէ մասնակցի օգտին:

7. ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՎ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

- a. Երեք մրցանակակիրները կստանան դրամական պարգևներ. առաջին տեղ՝ 2 000 000 ՀՀ դրամ, երկրորդ տեղ՝ 1 800 000 մլն ՀՀ դրամ, երրորդ տեղ՝ 1 600 000 մլն ՀՀ դրամ:
- b. Մրցույթի հաղթողները մրցույթի անցկացման օրվանից հետո 30 օրվա ընթացքում կտեղեկացվեն իրենց դրամական պարգևներն ստանալու ընթացակարգի մասին: Պարգևները փոխանակելի, վերագրելի կամ այլ կերպ փոխանցելի չեն, բացառությամբ գործընկերոջ կամ Visa-ի միանձնյա և բացարձակ հայեցողությամբ որոշվող դեպքերի:
- c. Պարգևներից յուրաքանչյուրի գումարը կարող է հաղթողներից յուրաքանչյուրի դեպքում հարկվել որպես եկամուտ: Անհրաժեշտության դեպքում գործառնական գործընկերը հաղթողներից յուրաքանչյուրի անունով դուրս է գրում կիրառելի հարկատեսակի ձևաթուղթ՝ ստացված պարգև(ներ)ի արժեքի չափով: Հայաստանում

սահմանված բոլոր կիրառելի հարկատեսակների (այդ թվում՝ եկամտային հարկերի և պահումների), ինչպես նաև դրանց հետ կապված հաշվետվությունների հետևանքների, տրամադրված պարզ(ներ)ի հետ կապված այլ վճարների կամ ծախսերի, կամ որևէ պարզևի հետ կապված այլ պարտավորությունների մասով պատասխանատվությունը բացառապես հաղթողներից յուրաքանչյուրին է:

8. ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ. Գործառնական գործընկերոջ կողմից կամ վերջինիս անունից հավաքված ողջ անձնական տեղեկատվությունը (ներառյալ, առանց սահմանափակման, դիմորդի անունը, կենսագրական տվյալները և բնակության քաղաքը և մարզը/տարածքը) կարող է օգտագործվել Մրցույթի վարչարարության ընթացքում, ինչպես նշված է նաև սույն պաշտոնական կանոններում: Մասնակցության հայտ ներկայացնելով՝ դիմորդներից յուրաքանչյուրն ընդունում է, որ գործառնական գործընկերը կարող է դիմորդի անձնական տեղեկատվությունը տրամադրել Visa-ին, քանի որ Visa-ն չի հավաքագրում կամ մշակում որևէ անձնական տվյալ: Visa-ն պարտավորվում է պաշտպանել այդ տվյալները, չտրամադրել երրորդ կողմերին և մրցույթի ավարտից հետո ոչնչացնել դրանք:

9. ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ. Մասնակցության հայտը ներկայացնելով՝ դիմորդներից յուրաքանչյուրը գործառնական գործընկերոջը և վերջինիս կողմից լիազորված կողմերին անվերադարձ հիմունքներով օժտում է անվերապահ, անշրջելի և մշտական իրավունքով և թույլտվությամբ՝ առանց ռոյալթիների վճարման հայտը և դրանում տեղ գտած ցանկացած տվյալ, տեղեկատվություն, նկարներ, բովանդակություն կամ նյութեր օգտագործելու վերաբերյալ՝ տվյալ պահին հայտնի կամ հետագայում ի հայտ եկող ցանկացած մեղիայով՝ ողջ աշխարհում՝ գովազդային և հարակից այլ նպատակներով: Գործառնական գործընկերը պարտավոր չէ օգտագործել վերը նշված տվյալները, նկարները, բովանդակությունը կամ նյութերը, սակայն կարող է օգտագործել և իր միանձնյա հայեցողությամբ փոփոխել դրանք՝ առանց հետագա պարտավորությունների կամ փոխհատուցման: Դիմորդներից յուրաքանչյուրը հրաժարվում է բոլոր

դրամական, մտավոր սեփականության իրավունքներից, գաղտնիության/հրապարակման հետ կապված իրավունքներից և այլ իրավական կամ բարոյական իրավունքներից, որոնք կարող են խոչընդոտել գործառնական գործընկերոջ, Visa-ի, գործընկերոջ և/կամ կազմակերպչի (բոլորը միասին՝ Կողմեր) կողմից հայտի օգտագործմանը կամ ՀԲԸՄ-ին բացառապես մրցույթի կապակցությամբ շնորհված իրավունքների, գործողությունների իրացմանը և բրենդի գովազդին: Դիմորդներից յուրաքանչյուրը համաձայնում է նման օգտագործման առնչությամբ գործառնական գործընկերոջ դեմ չներկայացնել դատական հայց կամ պահանջ:

Այնքանով, որքանով դա չի հակասում նախորդ պարբերությանը, բոլոր դիմորդները պահպանում են իրենց անձնական ոչ գույքային իրավունքները մտավոր սեփականության ցանկացած իրավունքների, հանրային հեղինակության հետ կապված կամ ցանկացած այլ իրավունքների մասով, որոնք կարող են ծագել կամ առաջանալ մրցույթի ընթացքում՝ նախորդ պարբերությունում հատուկ չնշված նպատակներով:

10. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿՈՒՄ. Գործառնական գործընկերը և ներգրավված կողմերը պատասխանատվություն չեն կրում մրցույթի կամ պարզենների հետ կապված որևէ հատուկ, անուղղակի, պատահական կամ հետևանքային վնասների համար՝ անկախ իրավական հիմքերից: Բոլոր պարզենները տրամադրվում են տվյալ պահին սահմանված հիմունքներով, և բացահայտ, ենթադրյալ կամ օրենքով նախատեսված որևէ տեսակի երաշխաբյուր չեն տրամադրվում կամ ենթադրվում:

11. ՈՐԱԿԱԶՄԿՈՒՄԸ. Գործառնական գործընկերն իրավասու է իր միանձնյա հայեցողությամբ որակագրկելու ցանկացած դիմորդի, որը, գործառնական գործընկերոջ կարծիքով, փորձել է կեղծել մասնակցության գործընթացը կամ մրցույթի անցկացումը կամ մրցույթի կայքէջը: Դա ներառում է սույն պաշտոնական կանոնների խախտմանն ուղղված, ոչ մրցակցային կամ խաթարող գործողությունները, կամ մրցույթի իրավաչափ իրականացումը խաթարելը կամ նսեմացնելը, կամ որևէ այլ անձի նյարդայնացնելը, վիրավորելը, սպառնալը կամ նրան հալածելը, և ՀԲԸՄ-ն իրավասու է

նման անձից օրենքով նախատեսված ամբողջ չափով պահանջելու պատճառով անասի հատուցում կամ իրավունքների վերականգնում:

12. ԴԱԴԱՐԵՑՈՒՄ/ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ. Գործառնական գործընկերը իրավասու է ցանկացած պահի փոփոխելու, ընդհատելու կամ դադարեցնելու մրցույթը որևէ պատճառով, այդ թվում, առանց սահմանափակման, տարերային աղետի, սարքավորման խափանման, քաղաքացիական հուզումների, խարդախության, ֆինանսական կամ վարչական բարդությունների, տեխնիկական խնդիրների (ինչպիսիք են՝ համակարգչային վիրուսը/սխալը (bug)), մրցույթի վարչարարությունը, անվտանգությունը, արդարությունը, ամբողջականություն կամ պատշաճ գործունեությունը խաթարող չթույլատրված միջամտությունների, կամ գործառնական գործընկերոջ վերահսկողությունից դուրս գտնվող այլ պատճառներով: Գործառնական գործընկերն իրավասու է փոփոխելու սույն պաշտոնական կանոնները և դրանք վերատեղադրելու մրցույթի կայքէջում: Նման ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում մրցույթի կայքէջում առցանց ծանուցման կամ լայն տարածման այլ միջոցներով:

13. ՎԵՃԵՐԸ. Եթե Հայաստանի օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ, յուրաքանչյուր դիմորդ համաձայնում է, որ.

- a. (i) Սույն պաշտոնական կանոններից, սույն մրցույթից կամ մրցանակներից բխող կամ դրանց հետ կապված ցանկացած և բոլոր վեճերը, պահանջները և հայց ներկայացնելու հիմքերը պետք է լուծվեն անհատական հիմունքներով՝ առանց խմբային հայցի որևէ միջոցի դիմելու, և բացառապես Հայաստանում գործող դատարանների կողմից, և սույնով դիմորդը հրաժարվում է դատարանների հետ կապված որևէ առարկությունից՝ կապված դատարանի գտնվելու վայրի, ընդդատության հետ կապված անձնական նկատառումների, ձևաթղթի հետ կապված անհարմարությունների կամ այլ հանգամանքների հետ, (ii) դիմորդի կողմից ներկայացված ցանկացած և բոլոր պահանջները, և դիմորդի օգտին կայացված ցանկացած և բոլոր որոշումներն ու փոխհատուցումները պետք է սահմանափակվեն միայն սեփական միջոցներից

կատարված փաստացի ծախսերով, ներառյալ՝ մրցույթին մասնակցության հետ կապված ծախսերը, սակայն որևէ կերպ չեն կարող ներառել փաստաբանական վճարները, (iii) դիմորդը որևէ պարագայում չի կարող ստանալ որևէ փոխհատուցում, և դիմորդը սույնով հրաժարվում է անուղղակի, կողմնակի և հետևանքային և այլ վնասների փոխհատուցում պահանջելու բոլոր իրավունքներից, բացառությամբ սեփական միջոցներից կատարված փաստացի ծախսերի, ինչպես նաև հրաժարվում է պատճառված վնասի բազմապատկման կամ այլ կերպ ավելացման բոլոր իրավունքներից: Մրցույթին, սույն պաշտոնական կանոնների կառուցվածքին, վավերականությանը, մեկնաբանությանն ու իրագործելիությանը վերաբերող բոլոր վեճերը, ինչպես նաև սույն պաշտոնական կանոնների կամ մրցույթի առնչությամբ դիմորդի և գործառնական գործընկերոջ իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում և մեկնաբանվում են Հայաստանի օրենքներին համապատասխան՝ չթույլատրելով կիրառելի օրենքի ընտրության հնարավորություն կամ կանոնների այնպիսի հակասականություն, որը կարող է հանգեցնել այլ երկրի իրավական համակարգի օրենքների կիրառման:

14. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑԵՐԻ ՀԱՐԹԱԿՆԵՐ. Մրցույթը կարող է հայտարարվել և հասանելի լինել սոցիալական մեկ կամ ավելի ցանցերում, ինչպիսիք են՝ Facebook-ը, Instagram-ը, YouTube-ը կամ LinkedIn-ը: Այդուհանդերձ, մրցույթը որևէ կերպ չի հովանավորվում, հաստատվում կամ վարվում նման հարթակներից որևէ մեկի կողմից, և որևէ կերպ կապված չէ դրանց հետ: Դիմորդները համաձայնում են նման հարթակների հետ կապված բոլոր պայմաններին և քաղաքականությունը, որոնք վերաբերելի են մրցույթին: